ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2026թ. 1-ին կիսամյակ)

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում և աջակցում է մարզային ենթակայությամբ **43 հանրակրթական ուսումնական հաստատությունների և 3 մարզային մշակութային ՊՈԱԿ-ների** գործունեությունը /Եղեգնաձորի երաժշտական դպրոց, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Եղեգնաձորի մշակույթի կենտրոն/:

Աջակցում է նախարարության ենթակայությամբ 3 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների */ Եղեգնաձորի վարժարան, Վայքի ավագ դպրոց, Ջերմուկի կրթահամալիր/* և համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական, մշակութային և մարզական հաստատությունների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու գործընթացին:

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են 19 նախադպրոցական ուսումնական հաստատություններ.

Եղեգնաձոր համայնք – 8 ՆՈՒՀ / նախադպրոցական ուսումնական հաստատություն/

1. «Վերնաշենի մանկապարտեզ » ՀՈԱԿ
2. «Գլաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ
3. «Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մսուր մանկապարտեզ » ՀՈԱԿ
4. «Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ
5. «Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ
6. «Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ
7. «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ
8. «Գետափի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

Արենի համայնք - 5 ՆՈՒՀ

1. «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի մասնաճյուղ Խաչիկ բնակավայրում

2 . «Արփիի մանկապատեզ» ՀՈԱԿ
3. «Աղավնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ
4. «Ռինդի մանկապարտեզ» ՀՈԱԿ
5. «Լիսա Գրիգորյանի անվան» ՀՈԱԿ մանկապարտեզ
6. «Ելփինի մանկապարտեզ » ՀՈԱԿ

Վայք համայնք - 3 ՆՈՒՀ

1. «Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ
2. «Վայքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ
3. «Վայքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ

Ջերմուկ համայնք - 2 ՆՈՒՀ

1. «Զատիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

«Զատիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ- ի մասնաճյուղ Կեչուտում

2. «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Մարզում գործում է համայնքային ենթակայությամբ 3 մանկապատանեկան մարզադպրոց.

1.Վայք համայնքի մանկապատանեկան մարզադպրոց,

2.Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոց,

3.Մալիշկայի մարզադպրոց

***1** մարզամշակութային կենտրոն Ջերմուկ համայնքում*

Մարզում գործում է **2 թանգարան**՝

1. «Գլաձորի պատմամշակութային արգելոց-թանգարան»՝ ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ
2. Եղեգնաձորի երկրագիտական թանգարան՝ մարզային ենթակայությամբ

1 երաժշտական դպրոց Եղեգնաձոր քաղաքում

Եղեգնաձորի երաժշտական դպրոց՝ մարզային ենթակայությամբ

4 արվեստի դպրոց՝ համայնքային ենթակայությամբ

1. Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոց
2. Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց
3. Ջերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց
4. Վայք քաղաքում՝ Խ. Ներսիսյանի անվան արվեստի դպրոց

***2* պատկերասրահ**՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում

2 ՄՍԿ (մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն)՝ Վայք և Եղեգնաձոր քաղաքներում

Մեկ գեղարվեստի դպրոց՝ Եղեգնաձոր քաղաքում

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են.

1 տարածաշրջանային պետական քոլեջ՝ Եղեգնաձոր քաղաքում

1 կրթահամալիր՝ Ջերմուկ քաղաքում

1 ավագ դպրոց՝ Վայք քաղաքում
1 վարժարան՝ Եղեգնաձոր քաղաքում
13 հիմնական և 30 միջնակարգ դպրոցներ

ՀՀ կառավարության կողմից բամաթիվ ծրագրեր են իրականացվում կրթության ոլորտում: Վերանորոգվում են ուսումնական հաստատությունների շենքեր, կառուցվում են նորերը:
/ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-ն որոշում/

Կառուցվել է 3 դպրոց

1. Եղեգնաձորի թիվ 1 հիմնական */ աշակերտների թիվը՝ 595, դպրոցի նախագծային հզորությունը՝ 432/*
2. Գոմքի միջնակարգ */ աշակերտների թիվը՝ 31 դպրոցի նախագծային հզորությունը՝ 100/*
3. Եղեգիսի միջնակարգ */ աշակերտների թիվը՝ 39 , դպրոցի նախագծային հզորությունը՝ 100/*

Կառուցվում են կրթահամալիրներ.

1. ***Արտաբույնքի կրթահամալիր*** */ աշակերտների թիվը՝ 113, Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 144, Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը՝ 80/ - Աշխատանքները չեն սկսվել*
2. ***Արփիի կրթահամալիր*** */ աշակերտների թիվը՝ 147, Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 144 , Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը՝ 40 /*
3.Մարտիրոսի կրթահամալիր */աշակերտների թիվը՝ 59 , Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 144, Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը՝ 80 /*
4.Քարագլխի կրթահամալիր */ աշակերտների թիվը՝ 77, Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 200, Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը՝ 80/*

Կառուցվում են դպրոցներ.

1. ***Չիվայի միջնակարգ*** */ աշակերտների թիվը՝ 57 , դպրոցի նախագծային հզորությունը՝ 150, նախակրթարան՝ 20 տեղ /*
2. Գեղափի միջնակարգ դպրոց */ աշակերտների թիվը՝ 266, դպրոցի նախագծային հզորությունը՝ 288/*
3. Արենիի միջնակարգ դպրոց */ աշակերտների թիվը՝ 310, նախագծային հզորությունը՝ 432/*
Վայքի հիմնական դպրոց */Աշխատանքները չեն սկսվել /*

Վերանորոգվում և հիմնանորոգվում են դպրոցներ.

1. Շատինի միջնակարգ դպրոց
2. Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց /ավարտված/ 2026 թվականի փետրվարի 9-ից/

3. Մալիշկայի Մ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց / ավարված /2026 թվականի մարտի 9-ից/
4. Եղեգնաձորի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց
5. Ռինդի միջնակարգ դպրոց
6. Գլաձորի միջնակարգ դպրոց
7. Զառիթափի միջնակարգ դպրոց

Ուսումնական հաստատություններում ստեղծվել են կոլեգիալ կառավարման մարմիններ՝ թվով 8-ը, որոնց անվանական կազմը հաստատվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի համապատասխան որոշմամբ:

Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում 2025 թվականի ընթացքում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ, որոնք նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

Ստորև ներկայացվում են մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել, կամ կազմակերպման և համակարգման աշխատանքներում ներգրավված է եղել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը:
Մասնագիտական կողմնորոշման նպատակով՝ ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում սովորող ավելի քան 250 աշակերտների, իսկ այնուհետև նաև ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող ՆԶՊ առարկայի ուսուցիչների համար 2026 թվականին իրականացվել է ճանաչողական այց ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով՝ ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների հետ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացված համապատասխան գրությամբ, համագործակցելով ՀՀ ՆԳՆ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության հետ, հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և զինղեկների հետ համատեղ հաստատվել է հաստատությունների ԱՌԿ պլանները:

Ապրիլ ամսվա ընթացքում կազմակերպվել է 11-րդ դասարանների աշակերտների 2025-2026 ուսումնական տարվա կրակային պատրաստության գործնական պապմունքները:

Վերապատրաստումներ

«Երաժշտական և արվեստի դպրոցներում ներառականության ապահովմանն ուղղված դասընթացներ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է եռօրյա սեմինար: Ծրագիրն իրականացվել է ս.թ. հունիսի 10-ին, 11-ին և 12-ին «Եղեգնաձորի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ում: Սեմինարին մասնակցել են մարզի երաժշտական ու արվեստի դպրոցների և կենտրոնների շուրջ 40 ներկայացուցիչներ:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի կողմից 2026 թվականի հուլիսի 7-ին, 8-ին և 9-ին նախատեսվում է անցկացնել «Դպրոցական գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ» ծրագիրը մարզի շուրջ 24 դպրոցի գրադարանավարների մասնակցությամբ: Իրականացվել են նախապատրաստական և կազամակերպչական աշխատանքներ:

Ապրիլի 29-ին «ԿԶՆԱԿ» հիմնադրամի հետ համատեղ Արենիի միջնակարգ դպրոցում 9-րդ դասարանցիների համար կազմակերպվել է էսսեի փորձնական քննություն: Ծրագրին մասնակցել են 70 ուսուցիչներ , տնօրեններ և 9-րդ դասարանի 30 աշակերտներ:

Առողջ ապրելակերպի արշավ

ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՎԿԱԿ) և UNICEF-ի հայաստանյան գրասենյակի կողմից մշակվել է **«Առողջ ապրելակերպի իրազեկման դպրոցական մարզային արշավներ»** ծրագիրը, որի նպատակն է խթանել առողջ ապրելակերպի ձևավորումը դպրոցահասակ երեխաների շրջանում, բարձրացնել նրանց իրազեկվածությունը առողջ սննդակարգի, ֆիզիկական ակտիվության կարևորության, ինչպես նաև վնասակար սովորությունների կանխարգելման վերաբերյալ: Ծրագրի շրջանակում 2026 թվականի մայիսի 26-ին իրականացվեց տեղեկատվական և կրթական միջոցառումների շարք ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգիսի միջնակարգ դպրոցում՝ ներգրավելով 5–11-րդ դասարանների աշակերտներին:
Ծրագրին մասնակցել են Եղեգիս համայնքի դպրոցների շուրջ 150 աշակերտներ:

«Քույր դպրոցներ» ծրագիր

2026 թ. ապրիլ-հունիս ամիսներին ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացվեց «Քույր դպրոցներ» մշակութային կրթության նպատակային ծրագրի գարնանային փուլը՝ Երևանի Մ. Մալունցյանի անվան արվեստի դպրոցի և Եղեգնաձորի երաժշտական դպրոցի համագործակցությամբ:

«Դպրոցական բաժանորդային համակարգի ծրագրի իրականացում» ծրագիր

Համագործակցելով Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի, Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի, Վանաձորի

Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի, Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի, ինչպես նաև տարբեր թատերական խմբերի ու արվեստագետների հետ՝ Եղեգնաձորի մշակույթի տանը ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցների 1-12-րդ դասարանների աշակերտները դպրոցական բաժանորդային համակարգի շրջանակներում դիտել են տարբեր ներկայացումներ:

Ծրագիրը հնարավորություն է տալիս ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում սովորող 1-12-րդ դասարանների բոլոր աշակերտներին, անկախ սոցիալական կարգավիճակից և բնակության վայրից, այցելել իր համայնքում կամ այլ բնակավայրում գտնվող մշակութային հաստատություն՝ մշակութային արժեքների հետ հաղորդակցումը դիտարկելով որպես կրթության և ուսուցման անբաժանելի բաղադրիչ:

2025-2026 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադա

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները:

1. Դպրոցական փուլի գրանցված մասնակիցների թիվը՝ **3559**
դպրոցական փուլին փաստացի մասնակցած աշակերտներ՝ **3107**
2. **մարզային փուլին** մասնակցելու իրավունք ստացած աշակերտներ՝ **383**
մարզային փուլին փաստացի մասնակցած աշակերտներ՝ **259**
3. **Հանրապետական** փուլին մասնակցելու իրավունք ստացած աշակերտներ՝ **30**
Հանրապետական փուլին փաստացի մասնակցած աշակերտներ՝ **25**

Հանրապետական փուլում մրցանակային տեղեր գրաված և գովասանագրի արժանացած աշակերտներ՝ 7

Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերի
I, II և III կարգի դիպլոմակիր աշակերտների ՑՈՒՑԱԿԸ
/2025-2026 ուստարի/

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Դաս.	Կրթօջախ	Դիպլոմ	Առարկա
1	Բաբայան	Աղասի	10	Աղավնաձորի մ/դ	III կարգ	ՆԶՊ
2	Ալեքսանյան	Լյուբա	11	Վայքի ա/դ	**III կարգ**	**ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
3	Քոչարյան	Էրիկ	12	Մալիշկայի մ/դ	**III կարգ**	**ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ**

Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերի
գովասանագրերի արժանացած աշակերտների ՑՈՒՑԱԿԸ
/2025-2026 ուստարի/

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Դաս.	Կրթօջախ	Առարկա
1	Կարապետյան	Աննա	9	Մալիշկայի N1 մ/դ	**ՔԻՄԻԱ**
2	Ղամբարյան	Արգիշտի	10	Գնդեվազի մ/դ	**ՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
3	ՋԻՆԳԱ	ԷՄՄԱՆՈՒԵԼ	10	Եղեգնաձորի վարժարան	**ՖՐԱՆՍԵՐԵՆ**
4	ՔՈՉԱՐՅԱՆ	ԷՐԻԿ	12	Մալիշկայի մ/դ	**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ**

Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերում դիպլոմների և գովասանագրերի արժանացած աշակերտները, դպրոցների տնօրենները և դասավանդող ուսուցիչները հյուրընկալվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում: Հանդիպման ընթացքում քննարկվել են կրթության ոլորտին առնչվող մի շարք հարցեր, կարևորվել դպրոցաշինական ծրագրերը, կրթական հաստատությունների նյութատեխնիկական ռեսուրսների համալրմանը և բովանդակային բարեփոխումներին ուղղված ծրագրերը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում հնչել է վերջին զանգը

Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում մայիսի 22-ին հնչել է վերջին զանգը: Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են դպրոցներ, ներկա գտնվել հանդիսավոր միջոցառումներին, ներկայացրել Վայոց ձորի մարզպետ Վահագն Արսենյանի շնորհավորական ուղերձը, բարեմաղթանքի խոսքեր ուղղել շրջանավարտներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 13.05.2026 թ. N823-Ա/2 հրամանով հաստատված «Մշակութային Վերջին զանգ» միջոցառումների մրցույթի հանձնաժողովը սահմանված գնահատման սանդղակով ամփոփել է մրցույթի արդյունքները:
Վայոց ձորի մարզում հաղթող ճանաչվեցին ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի Մ.Գորկու անվան թիվ 1 հիմնական և Ռինդի միջնակարգ դպրոցները:

2025-2026 ուսումնական տարվա սովորողի ավարտական և պետական ավարտական քննություններ

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ներկայացուցիչները պարբերաբար այցելել են դպրոցներ, հետևել 2025-2026 ուսումնական տարվա սովորողի /9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների/ ավարտական և պետական ավարտական քննությունների ընթացքին:

Կատարվել են համապատասխան աշխատանքներ՝ քննությունների բնականոն ընթացքն ապահովելու համար:

ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

Ըստ ժամանակացույցի Վայոց ձորի մարզում անցկացվել են «ՀՀ վարչապետի գավաթ» մարզական միջոցառումներ, ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, շախմատի առաջնություններ, հուշամրցաշարեր, դպրոցականների սպորտլանդիաներ:

ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող «Բասկետբոլի դպրոցականների լիգա» մարզական խաղեր

ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող «Բասկետբոլի դպրոցականների լիգա» մարզական խաղերի նպատակն է դպրոցականների շրջանում մարզաձևի զարգացումը, տաղանդավոր, հեռանկար ունեցող մարզիկների հայտնաբերումը, ֆիզիկապես առողջ և բարոյապես կայուն սերնդի ձևավորումը:

համայնքային փուլ

Մրցումներն անցկացվել են փետրվար – մարտ ամիսներին:

Եղեգնաձորի տարածաշրջան /փետրվարի 23-ից 27-ը/:
Երկու տարիքային խմբերում մասնակցել է 38 թիմ 342 մասնակից :
5-6- րդ դասարանների մրցույթում հաղթող է ճանաչվել Արենիի միջնակարգ դպրոցի թիմը:
7-9-րդ դասարանների մրցույթում՝ Արփիի միջնակարգ դպրոցի թիմը:

Վայքի տարածաշրջան /մարտի 4-5-ը/:
Երկու տարիքային խմբերում մասնակցել է 15 թիմ 135 մասնակից:
Հաղթողներ են ճանաչվել Վայքի հիմնական դպրոց /7-9-րդ դասարաններ/ և Ազատեկի միջնակարգ դպրոցի թիմերը /5-6- րդ դասարաններ /:

Ջերմուկի տարածաշրջան /մարտի 6-7-ը/:

Երկու տարիքային խմբերում մասնակցել է 8 թիմ 72 մասնակից: Հաղթողներ են ճանաչվել Ջերմուկի կրթահամալիրի թիմերը:

Ընդհանուր համայնքային փուլին մասնակցել է 61 թիմ, 549 մասնակից:

Մարզային փուլ

Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության համակարգմամբ Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցում , մարտի 18-ին և 19-ին կազմակերպվեցին ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող «Բասկետբոլի դպրոցականների լիգա» մարզական խաղերի մարզային փուլի խաղերը:

5-6-րդ դասարանների աշակերտների տարիքային խմբում հաղթող ճանաչվեցին՝
1-ին տեղ- Արենիի միջնակարգ դպրոց
2-րդ տեղ - Ջերմուկի կրթահամալիր
3-րդ տեղ- Վայքի հիմնական դպրոց

7-9-րդ դասարանների աշակերտների տարիքային խմբում հաղթող ճանաչվեցին՝
1-ին տեղ -Արփիի միջնակարգ դպրոց
2-րդ տեղ-Ջերմուկի կրթահամալիր
3-րդ տեղ- Ազատեկի միջնակարգ դպրոց

Երկու տարիքային խմբերի մրցույթին մասնակցել է 6 թիմ, 54 մասնակից

Հանրապետական / եզրափակիչ/ փուլ

Հանրապետական փուլը տեղի է ունեցել Երևանում, ապրիլի 12-18-ը:

5-6-րդ դասարանների մրցույթում Արենիի միջնակարգ դպրոցի թիմը գրավել է 7-րդ, իսկ 7-9 րդ դասարանների մրցույթում Արփիի միջնակարգ դպրոցի թիմը՝ 9-րդ տեղը:

« ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշար

«ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարը նպատակ ունի մասսայականացնել դպրոցականների շրջանում թենիսը, ամրապնդել դպրոցահասակ երեխաների առողջությունը, բարձրացնել առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը:

Համայնքային փուլ

Սեղանի թենիսի մրցութի համայնքային փուլը Եղեգնաձորի տարածաշրջանում անցկացվել է ապրիլի 6- 7-ը, որին երկու տարիքային խմբերում մասնակցել է 22 թիմ ,88 մասնակից:
5-9-րդ դասարանների մրցույթում հաղթողներ են ճանաչվել Չիվայի միջնակարգ, Եղեգնաձորի թիվ 2 հիմնական և Եղեգնաձորի վարժարանի թիմերը,
10-12-րդ դասարանների մրցույթում հաղթողներ են ճանաչվել Եղեգնաձորի վարժարանի, Չիվայի և Արենիի միջնակարգ դպրոցների թիմերը:

Վայքի տարածաշրջանում մրցույթն անցկացվել է մարտի 17-18-ը, որին երկու տարիքային խմբերում մասնակցել է 15 թիմ,60 մասնակից:
5-9-րդ դասարանների մրցույթում հաղթողներ են ճանաչվել Բարձրունու, Արտավանի և Հերհերի միջնակարգ դպրոցների թիմերը:
10-12-րդ դասարանների մրցույթում հաղթողներ են ճանաչվել Բարձրունու, Մարտիրոսի և Զառիթափի միջնակարգ դպրոցների թիմերը:

Ջերմուկի տարածաշրջանում մրցույթն անցկացվել է մարտի 15-16-ը, որին երկու տարիքային խմբերում մասնակցել է 7 թիմ, 28 մասնակից:
5-9-րդ դասարանների մրցույթում հաղթողներ են ճանաչվել Գնդեվազի և Ջերմուկի թիվ 3 դպրոցների թիմերը:
10-12-րդ դասարանների մրցույթում հաղթողներ են ճանաչվել՝ Գնդեվազի, Ջերմուկի թիվ 3 և Ջերմուկի կրթահամալիրի թիմերը:

Մարզային փուլ

Մարզային փուլը տեղի ունեցավ Եղեգնաձորի վարժարանում, ապրիլի 8-9-ը:

5-9-րդ դասարանների մրցույթին մասնակցել են 8 թիմ, 32 մասնակից:

10-12-րդ դասարանների մրցույթին մասնակցել են 9 թիմ, 36մասնակից:

7-9 –րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերի մրցույթում լավագույն արդյունք ցուցաբերեց Բարձրունու միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ, 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավեցին Չիվայի միջնակարգ դպրոցի, Արտավանի միջնակարգ դպրոցի թիմերը:

10-12 –րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերի մրցույթում լավագույն արդյունք ցուցաբերեց Եղեգնաձորի վարժարանի թիմը: 2-րդ, 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավեցին Չիվայի միջնակարգ դպրոցի, Բարձրունու միջնակարգ դպրոցի թիմերը:
Բարձրունու միջնակարգ դպրոցի և Եղեգնաձորի վարժարանի թիմերն իրավունք ստացան մասնակցելու մրցույթի եզրափակիչ փուլին:

Եզրափակիչ փուլ

Եզրափակիչ փուլը տեղի է ունեցել Չարենցավան քաղաքում /մայիսի 2-3-ը/:

Բարձրունու թիմը 5-9-րդ դասարանների մրցույթում գրավել է 10-րդ տեղը, իսկ Եղեգնաձորի վարժարանի թիմը 10-12-րդ դասարանների մրցույթում գրավել է 7-րդ տեղը:

<<ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող <<Սպորտլանդիա>> մարզական միջոցառում>>

Համայնքային փուլ

<<Սպորտլանդիա>> մարզական միջոցառման համայնքային փուլը Եղեգնաձորի տարածաշրջանում անցկացվել է ապրիլի 5-6-ը, որին մասնակցել են երկու տարիքային խմբերի 21 թիմեր, 210 մասնակիցներ:

1- 3-րդ դասարանների մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր են գրավել Եղեգնաձորի թիվ 1 հիմնական և Արենիի միջնակարգ դպրոցի թիմերը:

4-6-րդ դասարանների մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր են գրավել համապատասխանաբար Եղեգնաձորի թիվ 1 և Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցների թիմերը:

Վայքի տարածաշրջանում մրցույթը տեղի է ունեցել մարտի 12 -ին, որին մասնակցել են երկու տարիքային խմբերի 8 թիմեր և 80 մասնակիցներ:

1-3-րդ դասարանների մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր են գրավել Հերհերի և Ազատեկի միջնակարգ դպրոցների թիմերը:

4-6-րդ դասարանների մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր են գրավել Ազատեկի և Հերհերի միջնակարգ դպրոցների թիմերը:

Ջերմուկի տարածաշրջանում մրցույթը տեղի է ունեցել մարտի 13- ին, որին մասնակցել են երկու տարիքային խմբերի 7 թիմեր և 70 մասնակիցներ:

1-3-րդ դասարանների մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր են գրավել Ջերմուկի թիվ 3 և Ջերմուկի կրթահամալիրի թիմերը:

4-6-րդ դասարանների մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր են գրավել Ջերմուկի թիվ 3 միջնակարգ և Ջերմուկի հիմնական դպրոցների թիմերը:

Մարզային փուլ

Մարզային փուլը տեղի է ունեցել Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցում ապրիլի 20-21-ին: Մարզային փուլին երկու տարիքային խմբերից մասնակցեցին 12 թիմ, 120 մասնակից:
1-3-րդ դասարանների մրցույթում հաղթող ճանաչվեց Արենիի միջնակարգ դպրոցի թիմը:
4-6-րդ դասարանների մրցույթում հաղթող ճանաչվեց Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի թիմը:

Հանրապետական փուլ

Արենիի միջնակարգ դպրոցի թիմը /1-3-րդ դասարաններ, Վանաձոր, մայիսի 6-7/ գրավեց 2-րդ պատվավոր տեղը և արժանացավ արծաթե մեդալների և դրամական պարգևի:
Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի թիմը /4-6-րդ դասարան՝ մայիսի 7-8-ը/ գրավեց 4-րդ պատվավոր տեղը և պարգևատրվեց մարզական գույքով:

«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազք

Մարզային փուլ

Վայոց ձորի մարզի <<Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային փուլը տեղի է ունեցել մայիսի 13-ին Երևան–Մալիշկա- Մեղրի ճանապարհահատվածին:

Մարզային փուլին մասնակցեցին 23 դպրոցներից 161 մասնակիցներ:

Հաղթական հորիզոնականները բաշխվել են հետևյալ կերպ՝

1-ին տեղ՝ Արենիի միջնակարգ դպրոց

2-րդ տեղ՝ Աղավնաձորի միջնակարգ դպրոց

3-րդ տեղ՝ Ագարակաձորի միջնակարգ դպրոց

Տեսանյութը հղմամբ՝ https://www.facebook.com/reel/1651139229457823

Հանրապետական փուլ

Մրցաշարում 1-ին տեղ զբաղեցրած թիմը մասնակցեց եզրափակիչ փուլին: Այն անցկացվեց մայիսի 29-30-ը Տավուշի մարզում՝ «Պարզ լճի» տարածքում:

Եզրափակիչ փուլում Արենիի միջնակարգ դպրոցի թիմը զբաղեցրել է 1-ին պատվավոր տեղը:

Դպրոցը պարգևատրվեց 4 մլն դրամով, ֆիզկուլտուրայի ուսուցիչը՝ 700 000 դրամով, յուրաքանչյուր մասնակից երեխա 150 000 -ական դրամով:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օրը Վայոց ձորում

ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ մայիսի 13-ը հայտարարվել էր մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր:

Այն նպատակ ունի նպաստել մարզի բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացման,ֆիզիկապես կոփված և բարոյապես կայուն սերնդի ձևավորմանը:

Միջոցառման շրջանակներում մարզի կրթական հաստատություններում կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ:

«ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշար

Համայնքային փուլ /25 կմ/

Եղեգնաձորի տարածաշրջան /ապրիլի 28/: Մրցաշարն անցկացվել է Երևան-Մալիշկա-Մեղրի ճանապարհահատվածին:

Երկու տարիքային խմբերում մրցույթին մասնակցել են 41 թիմեր և 128 մասնակիցներ:

7-9-րդ դասարանների մրցույթում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Ագարակաձորի, Արփիի և Աղավնաձորի միջնակարգ դպրոցների թիմերը:

10-12-րդ դասարանների մրցույթում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Աղավնաձորի, Արենիի և Եղեգիսի միջնակարգ դպրոցների թիմերը:

Վայքի տարածաշրջան / ապրիլի 29/: Մրցաշարն անցկացվել է Երևան-Մալիշկա- Մեղրի ճանապարհահատվածին: Երկու տարիքային խմբերում մրցույթին մասնակցել են 16 թիմեր և 50 մասնակիցներ:

7-9-րդ դասարանցիների մրցույթում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Խնձորուտի, Հերհերի և Ազատեկի միջնակարգ դպրոցների թիմերը:

10-12-րդ դասարանների մրցույթում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրավել են Խնձորուտի, Մարտիրոսի և Գոմքի միջնակարգ դպրոցների թիմերը:

Ջերմուկի տարածաշրջան/ապրիլի 30/: Մրցաշարն անցկացվել է Ձախափնյակ թաղամասում: Երկու տարիքային խմբերում մրցույթին մասնակցել են 7 թիմեր և 20 մասնակիցներ:

7-9-րդ դասարանների մրցույթում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Ջերմուկի թիվ 3, Ջերմուկի կրթահամալիրի և Գնդեվազի միջնակարգ դպրոցների թիմերը:

10-12-րդ դասարանների մրցույթում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը համապատասխանաբար գրավել են Ջերմուկի թիվ 3, Ջերմուկի կրթահամալիրի և Գնդեվազի միջնակարգ դպրոցների թիմերը:

<<Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ>> սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի Վայոց ձորի մարզի տարածաշրջանային փուլում /Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ/ տարիքային երկու խմբերում ընդհանուր հաշվով մասնակցել են 198 դպրոցական:

Մարզային փուլ /30 կմ/

Մարզային փուլը անցկացվել է Երևան–Մալիշկա–Մեղրի ճանապարհահատվածում –մայիսի 11-ին:

Մարզային փուլին 2 տարիքային խմբերում մասնակցեցին 18 թիմեր և 54 մասնակիցներ, որից 9 թիմ և 18 մասնակից 1-ին տարիքային խմբում և 9 թիմ 36 մասնակից 2-րդ տարիքային խմբում:

Երկու տարիքային խմբերում հաղթողներ ճանաչվեցին՝

1-ին տարիքային խումբ-/7-9-րդ դասարաններ/ Ագարակաձորի միջնակարգ դպրոց

2-րդ տարիքային խումբ / 10-12 –րդ դասարաններ / Աղավնաձորի միջնակարգ դպրոց

Հանրապետական փուլը տեղի կունենա 2026թ սեպտեմբերի 11-12-ը Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 2145-Լ որոշման Հավելված 2-ի՝ Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների զարգացման 2024-2030 թվականների ռազմավարության գործողությունների պլանի 1-ին ռազմավարական ուղղության մասնավոր նպատակ 1.3-ի 4-րդ գործողության պահանջի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 17.02.2026թ. N 236-Ա/2 հրամանով հաստատված՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մարզական վարկանիշային սանդղակի ձևավորման կարգի համաձայն ամփոփվել են արդյունքները և կազմվել 2025 թվականի մարզական վարկանիշային սանդղակը:

Ամփոփված տեղեկատվության համաձայն, առաջին երեք մրցանակային տեղեր են զբաղեցրել՝

1. Վայոց ձորի մարզը,
2. Կոտայքի մարզը,
3. Գեղարքունիքի մարզը:

Նշված կարգի համաձայն, սանդղակի առաջին երեք տեղերը զբաղեցնող մարզերը կամ Երևան քաղաքը ստանում են համապատասխանաբար 8 մլն ՀՀ դրամ, 5 մլն ՀՀ դրամ և 3 մլն ՀՀ դրամ արժողությամբ մարզագույք:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

«Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ում 2026թ.-ի առաջին կիսամյակում կատարված աշխատանքները, միջոցառումները և համագործակցությունները:

1. «Իմ Հայրենիք» միջոցառումների շարք նախադպրոցական երեխաների համար:
2. Եվրոպայի խաղաղության և միասնության տոն. Էքսպո ցուցահանդես Եղեգնաձոր քաղաքում:
3. Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակներում «Թանգարանները միավորում են բաժանված աշխարհը» խորագրի ներքո «Դրամներ. ժամանակների միջով» ժամանակավոր ցուցադրություն:
4. Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակներում «Թանգարանները միավորում են բաժանված աշխարհը» խորագրի ներքո «Խաղաղության տիկնիկ» վարպետաց դաս /միջին դասարանի աշակերտների համար/:
5. Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակներում «Թանգարանները միավորում են բաժանված աշխարհը» խորագրի ներքո «Երգող աշխարհը» միջոցառում խարույկի շուրջ, համագործակցություն «Մաեստրո ստուդիա»-ի հետ:
6. Թանգարանների միջազգային օրվա շրջանակներում «Թանգարանները միավորում են բաժանված աշխարհը» խորագրի ներքո «Մշակույթների ճանապարհորդություն» միջոցառում, համագործակցություն մարզի կրթական հաստատությունների հետ:
7. «Եվրոպական հնագիտության օրեր» միջոցառման շրջանակներում «Հնագիտական արհեստանոց» վարպետաց դաս, հնագիտական առարկաների կրկնօրինակում կավագործ վարպետի հետ:
8. «Եվրոպական հնագիտության օրեր» միջոցառման շրջանակներում «Քյոշկ. Եղեգնաձորյան առեղծվածի բացահայտում» գիտաճանաչողական այցելություն Եղեգնաձոր քաղաքի հնավայր:
9. «Եվրոպական հնագիտության օրեր» միջոցառման շրջանակներում «Դարերի վկաներ. Գլաձոր և Թանահատ» Գիտաճանաչողական այցելություն Թանահատ և «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց թանգարան

Վերոնշյալ միջոցառումներին զուգահեռ՝ թանգարանում շարունակվում են հիմնական աշխատանքները՝ առարկաների մշակում, գրանցում, վերամշակում և թվայնացում, ցուցանմուշների մուտքագրում էլեկտրոնային շտեմարան, էքսկուրսիա, գիտական նյութերի մշակումներ և այլն:

«Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ում 2026թ.-ի առաջին կիսամյակում կատարված աշխատանքները, միջոցառումները և համագործակցությունները:

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում դպրոցն ակտիվորեն մասնակցել է «Մեղեդի» երգարվեստի համահայկական XVII, «Հայրենիքը, արվեստն ու ես», «Global Art Fest» միջազգային, «ARM PROF MUSIC FEST» համահայկական , «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային XVII, Էջմիածնի «Փոքրիկ քայլ» միջազգային 7-րդ մրցույթ-փառատոներին՝ արժանանալով մրցանակային տեղերի :

Եղեգնաձորի երաժշտական դպրոցում 2025 թվականին կազմակերպվել են համերգներ նվիրված՝

- Բանակի օրվան
- Մայրության և գեղեցկության տոնին
- Հայաստանի առաջին հանրապետությանը
- Երեխաների պաշտպանության օրվան

Կիսամյակի ընթացքում կազմակերպվել են նաև համերգներ ՝

- «Երաժշտության հավերժ հրաշքը» խորագրով
- Դասարանական համերգներ՝ տարբեր բաժիններում
- Հաշվետու համերգ՝ մի շարք միջազգային և համահայկական մրցույթ-փառատոների մասնակից երեխաների մասնակցությամբ:

Դպրոցը մասնակցել է Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացած «Քույր դպրոցներ» մշակութային կրթության նպատակային ծրագրի 2025 թվականի միջոցառումների եզրափակիչ համերգին:

Նախընտրական փուլը հաղթահարել և մասնակցություն է ունեցել Հայաստանի հանրային հեռուստաընկերության և Եվրոպական հեռարձակողների միության համագործակցության շրջանակում հունիսի 6-ին Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ ԿԳՄՍՆ բարձր հովանու ներքո տեղի ունեցած «Դասական Եվրատեսիլ 2026»-ին:

«Քույր դպրոցներ» մշակութային կրթության նպատակային ծրագրի շրջանակներում Եղեգնաձորի երաժշտական դպրոցում տեղի է ունեցել համերգ՝ Երևանի Մալունցյանի անվան արվեստի և Եղեգնաձորի երաժշտական դպրոցների մասնակցությամբ: Ծրագրի

նպատակն է ամրապնդել հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների միջև գործող կապերը՝ համատեղ ստեղծագործական աշխատանքի և փորձի փոխանակման արդյունքում ապահովելով ոլորտի համաչափ, ներդաշնակ և հավասարաչափ զարգացումը:

Դպրոցն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված և «Ընտանիք» Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի կողմից, «Մշակույթի վարպետը» ծրագրի շրջանակում կազմակերպված համերգին՝ նվիրված ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի ծննդյան 100 – ամյակին:

Կազմակերպվել է նաև մարզային միացյալ համերգ՝ Եղեգնաձորի երաժշտական, Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի, Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի և Վայքի Խաչատուր Ներսիսյանի անվան արվեստի դպրոցների մասնակցությամբ:

Փոքրիկ շրջայցով, ուսուցողական ծրագրի շրջանանկներում, Եղեգնաձորի երաժշտական դպրոցում հյուրընկալվել են Գլաձոր բնակավայրի և Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզների սաները՝ հնարավորություն ունենալով ծանոթանալու տարբեր երաժշտական գործիքների հետ:

Նման միջոցառումները նպաստում են փոքրիկների մոտ արվեստի հանդեպ սիրո ձևավորմանը և երաժշտական կրթության վաղ տարիքից կարևորության գիտակցմանը:

Դպրոցն ակտիվորեն մասնակցել է մարզի մի շարք մշակութային օջախների կողմից կազմակերպված միջոցառումներին՝ մասնավորապես. Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի, Գեղարվեստի դպրոցի, ինչպես նաև մարզային գրադարանի միջոցառումներին:

Եղեգնաձորի երաժշտական դպրոցի ժողովրդական գործիքների «Քնար» համույթը սեպտեմբեր ամսին համերգային ծրագրով կմեկնի Լեհաստան :

«Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ում 2026թ.-ի առաջին կիսամյակում կատարված աշխատանքները, միջոցառումները և համագործակցությունները:

- 13. 01.2026թ. –Ամանորյա համերգ «Ատգեն Արմենյան» երաժշտական ստուդիայի ուժերով
- 08.03. 2026թ.- Գարնանային համերգ «Գարուն և ժպիտ»
- 15. 03.2026թ.-Կրկեսային ներկայացում «Գոշա»
- 30. 03.2026թ.- « Ֆուլհաուս » ֆիլմի ցուցադրում
- 07. 04.20026թ. Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառում՝ «Կոմիտասից Ազնավուր»
- 08 . 04 « Բեմել » թատրոնի «Նռնենի » ներկայացում
- 10. 04- Գավառի Լևոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոն՝ «Անատոլիական պատմություն» ներկայացում

- 16. 04. 2026թ. «Կատակօֆֆ» թատրոնի «Սպիտակ ախտ» ներկայացում
- 22. 04.2026թ. Վայոց ձորի մարզի տաղանդավոր երաժիշտ-կատարող երեխաների 2026թ. միջազգային և հանրապետական մրցույթ-փառատոների ժամանակ ստացած մրցանակների և դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողություն և համերգ
- 23. 04.2026թ. ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու « Ընտանիք » ՄՊՍ կենտրոնի՝ Խաչատուր Ավետիսյանի 100-ամյակին նվիրված «Մշակույթի վարպետը» խորագրով միջմարզային փառատոնի կազմակերպում
- 30. 04.2026թ.« Արի գնանք թատրոն» մանկական ներկայացում «Դե,սպասիր»
- 15. 05.2026թ. Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվ. դրամատիկական թատրոն « Ուրբաթ 13 » ներկայացում
- 19. 05. 2026. Պետական դրամատիկական թատրոն «Կիլիկիո արքան» ներկայացում
- 22. 05.2026թ. Ալեքսիս Փոլ -ֆրանս-հայկական երաժշտական համույթի համերգ
- 02. 06.2026թ. Գավառի Լևոն Քալանթարի անվ. պետական դրամատիկական թատրոնի մանկական ներկայացում՝ «Հենզելն ու Գրետելը» :

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
կրթության,մշակույթի և սպորտի վարչություն